



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 048

« 06 » Դեկտեմբերի 2013թ

ՀՀ Գեղարքունիքի մարզի

Լիճք համայնքի ղեկավար

պարոն Գ. Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն Լիճք համայնքում տեղակայված բնական հանքային ջրի աղբյուրի տարածքի մասին.

1. այն հողամասը, որտեղ գտնվում է Լիճքի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի թիվ 4Ք հորատանցքը <<Տեխնոման>> ՍՊԸ-ին տրամադրվել է սեփականության, թե վարձակալության իրավունքով:
2. Սեփականության իրավունքով տրամադրելու դեպքում խնդրում եմ հայտնել այն զանգվածային լրատվության միջոցի անվանումն ու օրը, որով կատարվել է աճուրդի մասին հայտարարությունը և տրամադրել աճուրդով վաճառքի մեկնարկային գին սահմանելու մասին համայնքի ավագանու որոշման պատճենը, <<Տեխնոման>> ՍՊԸ-ի ու աճուրդի այլ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի պատճենները, սակարկության արդյունքով կազմված արձանագրության և օտարման պայմանագրի պատճենները:
3. Վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում խնդրում եմ հայտնել այն զանգվածային լրատվության միջոցի անվանումն ու օրը, որով կատարվել է մրցույթի մասին հայտարարությունը, <<Տեխնոման>> ՍՊԸ-ի ու մրցույթի այլ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի պատճենները, մրցույթի արդյունքների մասին արձանագրության և հողի վարձակալության պայմանագրի պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Գավառի օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան